

ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ներկայացված են Հայաստանի Հանրապետության ջրային ռեսուրսների վերլուծությունը, ինչպես նաև համակարգի բարելավման հիմնախնդիրները, մասնավորապես ջրօգտագործողների (ձկնարդյունաբերություն, հիդրոէներգետիկա և ռեկրեացիա) և ջրասպառողների (գյուղատնտեսություն, արդյունաբերություն և կոմունալ կենցաղային տնտեսություն) համակարգում ընդգրկված առաջնային հարցերը: Գերխնդիր է համարվում բավարարել քաղաքացիների և տնտեսության տարբեր ոլորտների, անհրաժեշտ քանակի և անհրաժեշտ որակի ջրապահանջի ապահովումը, պահպանելով ազգային ջրային պաշարը, ինչպես նաև շրջակա միջավայրի էկոլոգիական կայունությունը:

Առանցքային բառեր. բնապահպանություն, կառավարում, ջրային ռեսուրսներ, միջավայրի էկոլոգիա:

Ջրագուրկ տարածքներում ջրի պաշարներ ստեղծելու հարցը կամ ջրի վերաբաշխումը կենսական, դժվար լուծելի, բայց իրագործելի է: Ինչպես շատ երկրներում, այնպես էլ մեր հանրապետությունում ջրի պաշարներն ընդհանրապես բավարար են, սակայն ըստ ժամանակի և տարածության խիստ անհավասարաչափ են բաշխված: Անհրաժեշտ է ուղիներ գտնել և այդ ջուրը մարդու օգտագործման համար դարձնել մատչելի:

Հայաստանի տարածքի միջին նիշը 1818 մ է, ինչի հետևանքով ջրերի գերակշռող քանակն արտահոսում է նրա սահմաններից դուրս՝ դեպի հարևան երկրներ: Բնական ջրային պաշարների առումով Հայաստանը հարևան երկրների համեմատությամբ գտնվում է առավել անբարենպաստ պայմաններում: Հայաստանի ջրային ռեսուրսները ձևավորվում են Քուռ գետի ավազանում [1], որի ջրային ռեսուրսը միջին տարեկան կտրվածքով կազմում է 30,5 մլրդ մ³, այդ թվում՝ մակերեսային հոսքը կազմում է 27,3 մլրդ մ³, իսկ ստորգետնյա ջրերինը՝ 3,2 մլրդ մ³, որից Հայաստանի տարածքում կազմավորվում է 7,3 մլրդ մ³ կամ 24% [2]: 1990 թ. ջրօգտագործման ընդհանուր ծավալը կազմում էր 3,9 մլրդ մ³ [3], այսինքն ջրային ռեսուրսների օգտագործման ծավալը նվազել է 1,4 մլրդ մ³-ով [4]: Ջրային պաշարների նպատակային օգտագործման և ջրաբաշխման հարցերը ռազմավարական նշանակություն ունեն և հանրապետության համար դառնում են կարևորագույն գերխնդիր:

Իրենց բնույթով ջրային պաշարների օգտագործումը տնտեսության մեջ բաժանվում է երկու դասի՝ ջրօգտագործողներ և ջրասպառողներ: Ջրօգտագործման դեպքում ջրաղբյուրների կամ բնական ջրամբարների ջուրն օգտագործվում է որպես միջավայր՝ հումք կամ էներգիայի ստացման աղբյուր: Ջրօգտագործողների հիմնական ոլորտներն են համարվում հիդրոէներգետիկան, ձկնարդյունաբերությունը և ջրային տրանսպորտը: Ջրասպառողներ են՝ արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը և կոմունալ-կենցաղային ձեռնարկությունները, որոնց գործունեության ընթացքում ջուրը կորչում է մասնակի կամ անվերադարձ: Թվարկված ոլորտների ջրօգտագործման կառավարման և զարգացման համար անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել:

Տնտեսության մեջ ջրի նկատմամբ աճող պահանջները հնարավոր է ծածկել ինչպես մակերևութային, այնպես էլ՝ ստորգետնյա ջրերի հաշվին:

ՀՀ գյուղատնտեսական արտադրության շուրջ 80%-ը բաժին է ընկնում ոռոգելի երկրագործությանը, այդ իսկ պատճառով Հայաստանում ջրատնտեսական շինարարությանը միջտ տրվել է առաջնային դեր [2,3]: Մինչև 1990 թ. հանրապետությունում կառուցվել են 80 ջրամբարներ, 3200 կմ² մայր և միջտնտեսային ջրանցքներ, 17900 կմ² ներտնտեսային ցանցեր, 450 պոմպակայաններ, 2221 խորքային հորեր, 1609 կմ² դրենաժային ցանց և 3000 կմ² ընդհանուր երկարությամբ արոտավայրերի ջրարբիացման ցանցեր [5]:

Ջրային ռեսուրսից ջուր վերցնելը կամ այլ եղանակով նվազեցնելը, ջրի կուտակումը, ջրային հոսքի խոչընդոտումը կամ շեղումը, ջրային ռեսուրսի աղտոտումը, ջրային ռեսուրսի մեջ կեղտաջրերի արտանետումը, վնասակար նյութերի կուտակումը երկրի մակերևութին այնպիսի եղանակով, որը կարող է վնասակար ազդեցություն ունենալ ջրային ռեսուրսի վրա, ինչպես նաև ջրային ռեսուրսի հունի, ափերի, հոսքի կամ հատկությունների փոփոխումը ջրօգտագործման բաղադրիչներն են [6]:

Խմելու ջրի փոխադրման համակարգը ֆիզիկապես մաշված է: Մենք ջրաղբյուրների խնդիր չունենք, դրանք համապատասխանում են ջրի որակի ստանդարտներին, բայց աղբյուրից մինչև սպառողին հասնելը ջուրը բավականին երկար ճանապարհ է անցնում, ինչի արդյունքում սպառողը ստանում է ոչ բավարար որակի ջուր:

Անհրաժեշտ է բացահայտել Հայաստանում ջրի հասանելիության ապահովման, անձրևաջրերի, կեղտաջրերի, հեղեղաջրերի կառավարման և մակերևութային ջրերի աղտոտման, ջրից առաջացող հիվանդությունների և համաճարակների վերահսկման, ջրից կախված վտանգների հիմնախնդիրները: Այն հնարավոր է իրականացնել բոլոր կազմակերպությունների հետ համատեղ, որոնք կառավարում են խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման խնդիրները: Պետք է նշել, որ քաղաքային ջրի համապարփակ կառավարումն ներառում է ոչ միայն ջրամատակարարում և ջրահեռացում, կեղտաջրերի մաքրում, այլ նաև անձրևաջրերի և հեղեղաջրերի, ոռոգման ջրի կառավարում:

Խողովակաշարերի մաշվածության, ինչպես նաև համակարգի ոչ լիարժեք կառավարման պատճառով Հայաստանում ջրի կորուստը կազմում է 80...85% [7] , ինչն անթույլատրելի է, քանի որ ջրային պաշարները բավականին քիչ են, և ուշադրությունը ջրի հիմնախնդիրներին հրավիրելն անհրաժեշտություն է:

Ջրային ռեսուրսների կառավարման գործում կարևոր տեղ են գրավում հետևյալ միջոցառումները.

- 1) ռոռզման և խմելու ջրի համակարգերի կայուն շահագործման ապահովումը, կառավարման մեխանիզմների կատարելագործումը և ռոռզման նոր տեխնոլոգիաների ներդրումը,
- 2) ռոռզման ենթակառուցվածքների և ծառայությունների բարելավումը, ռոռզելի տարածքների ավելացումը և ռոռզելի հողերի մելիորատիվ վիճակի բարելավումը,
- 3) խմելու ջրամատակարարման, ցամաքուրդային, ռոռզման և կեղտաջրերի մաքրման ծառայությունների որակի և կառավարման նկատմամբ հսկողության ապահովումը՝ հատկապես գյուղական վայրերում,
- 4) ջրօգտագործողների կողմից ջրամատակարարման և հեռացվող կեղտաջրերի որակի մոնիթորինգի իրականացման բարելավումը, որն ուղղված է ջրային ռեսուրսները աղտոտումից պաշտպանելուն,
- 5) արդյունաբերական հոսքաջրերի աղտոտման նվազեցումը և կեղտաջրերի մաքրման կայանների անհրաժեշտ վերանորոգումն ու նորերի կառուցումը,
- 6) ջրի հաշվառման համակարգի ներդրումը, ջրի տնտեսմանն ուղղված միջոցառումների իրականացումը,
- 7) ջրատնտեսական համակարգում ջրակորուստների նվազեցումը,
- 8) էներգատար ջրամատակարարման համակարգերի հնարավորինս փոխարինումը ինքնահոս համակարգերով,
- 9) պահանջվող որակի և անհրաժեշտ քանակի ջրով ապահովումը,
- 10) օրվա կարգավորիչ ջրամբարների վերանորոգումը և նորերի կառուցումը,
- 11) ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի ենթակառուցվածքի զարգացումը,
- 12) համակարգի կառավարման մեխանիզմների կատարելագործումը,
- 13) ներդրումների անհրաժեշտ ծավալների ներգրավումը,
- 14) կեղտաջրերի մաքրման նոր տեխնոլոգիաների ներդրումը:

**Օ. Ա. Կուչկոյան,
Լ. Ա. Թոնոյան**

ВОПРОСЫ УПРАВЛЕНИЯ ВОДНЫМИ РЕСУРСАМИ

Представлены анализ водных ресурсов Республики Армения, а также основы совершенствования системы, в частности первоочередные вопросы, связанные с системой водопользователей (рыболовство, гидроэнергетика и рекреация) и водопотребителей (промышленность, сельское хозяйство и коммунально бытовое хозяйство). Главной задачей мы считаем обеспечение граждан и разных хозяйственных отраслей необходимым количеством и качеством потребляемой воды, сохраняя национальный водный ресурс и экологическую устойчивость окружающей среды.

Ключевые слова: *окружающая среда, водные ресурсы, менеджмент.*

**O. A. Kuchkoyan,
L. A. Tonoyan**

ISSUES IN WATER RESOURCES MANAGEMENT

The paper brings up analysis of water resources of the Republic of Armenia, as well as the basis for improvement of the system, in particular the primary issues related to the system of water consumers (fishery, hydropower and recreation) and water users (industry, agriculture, domestic and communal sector). The main aim is to supply the required quantity and quality of water to citizens and different economic sectors, as well as to conserve the national water resources and environmental sustainability.

Keywords: *environment, water resources, management.*

Գրականություն

1. **Ավագյան Ա.Վ.** ԽՍՀՄ ջրային պաշարները, նրանց արդյունավետ օգտագործումն ու պահպանումը. Մ.: Գիտելիք, 1975. էջ 15-22:
2. **Մովսիսյան Վ. Մ.** Հայաստանի Հանրապետության ջրային պաշարների կանխատեսումը, գնահատումը և համալիր կառավարումը. Երևան, 2003. 205 էջ:
3. **Ջավադյան Յ.Լ., Տոնոյան Ա.Ռ.** Հայաստանի ջրային պաշարները և հողերի ինքնահոս ոռոգման հեռանկարները. Երևան: Լիմուշ, 2010. 242 էջ:
4. **Հայկական ՍՍՀ ջրագրությունը/ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիա.** Երևան, 1981. 183 էջ :
5. **Թադևոսյան Հ.Թ.** Ձգվում են կապույտ երակները. Երևան, 2000. 768 էջ:
6. **ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին.** ՀՀ օրենքը ընդունված 2006 թվականի նոյեմբերի 27-ին:
7. <http://www.armradio.am>.

Վուչկոյան Օֆելյա Արտուշայի (ՀՀ, ք. Երևան)- ՃՇՀԱՀ, Էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման ամբիոն, դասխոս, հեռ. 099554729, **Տոնոյան Լիլիթ Արմենի** (ՀՀ, ք. Երևան)- ՃՇՀԱՀ, Էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման ամբիոն, մագիստրոս, հեռ. 094008841

Кучкоян Офелия Артюшевна (РА, г.Ереван) - НУАСА, преподаватель, кафедра Экономики, права и управления, тел.: 099554729, **Тоноян Лилия Арменовна** (РА, г.Ереван) - НУАСА, магистр, кафедра Экономики, права и управления, тел. 094008841

Kuchkoyan Ofelya Artush (RA, Yerevan) - NUACA, Chair of Economy, law and management, lecturer, cell phone: 099554729, **Tonoyan Lilit Armen** (RA, Yerevan)- NUACA, Chair of Economy, law and management, Master student, tel.: 094008841

Ներկայացվել է ` 25.11.2013թ.

Ընդունվել է տպագրության `02.12.2013թ.